

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԴԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ В ВЫСШЕЙ ШКОЛЕ
FOREIGN LANGUAGES IN HIGHER EDUCATION**

Գիտական հանդես
Научный журнал
Scientific Journal



2 (19)

Երևան – 2015

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Вестник издается по решению Ученого совета ЕГУ
The Bulletin is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ ր.գ.դ., պրոֆ. Երզնկյան Ե.Լ.

Խմբագրական խորհուրդ.

ր.գ.դ., պրոֆ. Գասպարյան Ս.Բ., ր.գ.դ., պրոֆ. Գաբրիելյան Յու.Ս., ր.գ.դ., պրոֆ. Մակարյան Ա.Ա., ր.գ.դ., պրոֆ. Պարոնյան Շ.Հ., ր.գ.դ., դոց. Մինոնյան Ա.Ա., ր.գ.դ., դոց. Առաքելյան Ա.Հ., ր.գ.թ., դոց. Բաղդասարյան Հ.Գ., մ.գ.թ., դոց. Կարապետյան Կ.Ս., մ.գ.թ., դոց. Հարությունյան Ջ.Հ., դոց. Թովմասյան Ն.Ս. (պատասխանատու քարտուղար):

Главный редактор: д.ф.н., проф. Ерзинкян Е.Л.

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Гаспарян С.К., д.ф.н., проф. Габриелян Ю.М., д.ф.н., проф. Макарян А.А., д.ф.н., проф. Паронян Ш.А., д.ф.н., доц. Симонян А.А., д.ф.н., доц. Аракелян А.Г., к.ф.н., доц. Багдасарян А.Г., к.п.н., доц. Карапетян К.М., к.п.н., доц. Арутюнян З.Г., доц. Товмасын Н.М. (ответ. секретарь).

Editor-in-chief: Doctor in Philology, Prof. Yerznkyan Y.L.

Editorial Board:

Doctor in Philology, Prof. Gasparyan S.K., Doctor in Philology, Prof. Gabrielyan Y.M., Doctor in Philology, Prof. Makaryan A.A., Doctor in Philology, Prof. Paronyan Sh.H., Doctor in Philology, Associate Prof. Simonyan A.A., Doctor in Philology, Associate Prof. Arakelyan A.H., PhD, Associate Prof. Baghdasaryan H.G., PhD, Associate Prof. Karapetyan K.M., PhD, Associate Prof. Harutyunyan Z.H., Associate Prof. Tovmasyan N.M. (Executive Secretary).

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հաղեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ցանկում:

Научный журнал «Иностранные языки в высшей школе» включен в список периодических изданий, допущенных Высшей аттестационной комиссией РА для публикации результатов диссертационных работ.

Scientific journal "Foreign Languages in Higher Education" is included in the list of journals approved by RA Supreme Certifying Commission to publish the main findings of dissertations.

**ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՉ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆՆ
ԻՆՏԵԳՐԵԼՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՄԻՆ**

Ուսուցման գործընթացը գլոբալ տեղեկատվական հասարակության մեջ պահանջում է ավելի ստեղծագործական մոտեցում կրթության նկատմամբ: Հողվածում ուսումնասիրվում է երաժշտության ազդեցությունն անհատի զգացմունքների վրա, դիտարկվում են երաժշտության կիրառության օգուտը բժշկության, կրթության և մասնավորապես օտար լեզվի դասավանդման մեջ: Համատեղելով երգն ու երաժշտությունը օտար լեզվի դասավանդման հետ կարելի է թափանցել ենթագիտակցության խորքերը, ոգևորել և հետաքրքրություն առաջացնել մեծ դասականների, նրանց մշակույթի, պատմության, արվեստի նկատմամբ, նպաստել անձի լիարժեք զարգացմանը, ձևավորել ստեղծագործական մտածողություն և ճաշակ:

Բանալի բառեր. երգ և երաժշտություն, անգլերեն լեզվի դասավանդում, դասական երաժշտություն, բաց դասերի շարժում, երաժշտական թերապիա, տրամադրության երաժշտություն

Անգլերեն լեզվի դասավանդումը իմ մասնագիտությունն է և իմ կյանքի անբաժանելի մասը վերջին տասնհինգ տարիների ընթացքում: Գիտամեթոդական աշխատանքների ուսումնասիրության բնագավառում հետաքրքրվել եմ լեզվաբանության և լեզվի դասավանդման մի շարք բնագավառներով, հիմնականում հեռուստատեսային գովազդների լեզվի ուսումնասիրությամբ, գործարար անգլերենի դասավանդման հետ առնչվող հիմնահարցերով: Մասնագիտական որոնումներին զուգահեռ, ինչպես ցանկացած անհատ, հետապնդում եմ մի շարք հետաքրքրություններ և նախասիրություններ, որոնցից կարևորագույնը, թերևս, երաժշտությունն է: Ավարտել եմ յոթնամյա երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը, երգել եմ դպրոցի երգչախմբում և հստակ գիտակցում եմ, թե որքան նշանակալից է եղել երաժշտական կրթության դերն ու ազդեցությունը իմ՝ որպես անհատի կայացման, զարգացման և հետագայում ճաշակի ձևավորման գործում: Վստահ եմ, մմանապես, լեզուները, երաժշտությունն ու կրթությունը կազմում են թե՛ առանձին անհատի, և թե՛ հավաքական մարդկային պատմության, մշակութային կյանքի կարևորագույն մասը: Երաժշտությունն ու երգերը մեզ ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում, տարբեր իրավիճակներում, ուրախ և տխուր պահերին: Դրանք հաճույքի, զվարճանքի և ոգեշնչման մեծ աղբյուր են, հաղորդակցման ու շփման հզորագույն միջոց:

20-րդ դարի երկրորդ կեսից երաժշտական ստեղծագործությունները դարձան մուլտիֆիլմերի անբաժանելի մասը: Երիտասարդներից շատերը դասականների որոշ ստեղծագործություններ ճանաչում են հենց խաղար-

կային ֆիլմերի շնորհիվ: Օրինակ՝ Դիանեյի, Ուորներ Բրուսի և ՄՋՄ հայտնի ստուդիաների մուլտֆիլմերում հնչում են Լիստի, Բեթհովենի, Բախի, Բրահմսի, Շոպենի, Մոցարտի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Շատ անգամ երիտասարդները ճանաչում են դրանք, սակայն ծանոթ չեն ստեղծագործության անվանն ու հեղինակին: Բազմաթիվ ուսանողների հետ շփման ընթացքում պարզեցի, որ երիտասարդների մեծ մասը հիմնականում նախընտրում է ժամանակակից երաժշտությունը դասական երաժշտությանը: Նման կարծիքը հիմնավորելու համար անցկացրեցի մի փոքրածավալ հարցում հարյուր ուսանողների շրջանակում՝ պարզելու երիտասարդների երաժշտական նախասիրությունները: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողների մեծ մասը ամեն օր լսում է երաժշտություն, հատկապես դաս սովորելիս: Նրանցից իննսուները նշեցին, որ լսում են երաժշտություն թե՛ ուրախ, և թե՛ տխուր պահերին: Ինչ վերաբերում է երաժշտության ոճին, հարցաթերթիկը լրացրած հարյուր ուսանողներից միայն տասնհինգն էին նշել, որ լսում են դասական երաժշտություն: Վերոհիշյալ գործոններն էլ պատճառ հանդիսացան մի նոր գաղափարի և հետազոտության համար:

Սույն հոդվածում քննարկվելու է երաժշտության հզոր ազդեցությունն անհատի վրա, վերջինիս բուժիչ հատկությունները: Այնուհետև կփորձեն հիմնավորել, թե ինչու այն պետք է և ինչպես կարող է կիրառվել օտար լեզվի դասավանդման մեջ, կամ լեզվի դասավանդման հետ միավորված, ինչ օգուտներ և արդյունքներ կարող է տալ լեզվի և երաժշտության համակցված մատուցումը: Թեման ուսումնասիրված է տարբեր բնագավառների մասնագետների և հետազոտողների կողմից՝ Զ. Շեն, Վ. Ռոսովա, Ա. Թսե, Թ. Մրֆի: Եթե նշված աշխատությունների ուշադրության առանցքում հիմնականում գտնվում են երգերը, ապա սույն հոդվածի ուշադրության կենտրոնում դասական երաժշտությունն է: Հետազոտության գործնական արդյունքները կամփոփվեն մեթոդական-ուսումնական ձեռնարկում՝ նվիրված դասական երաժշտության և օտար լեզվի փոխգործակցության վրա հիմնված դասավանդմանը:

Եթե լեզուն մարդկային հաղորդակցության, որոշակի հասարակության, մարդկանց խմբի մեջ մտքերի փոխանակման և փոխըմբռնման հիմնական միջոցն է, ապա երաժշտությունը վերագգային լեզու է, որը բոլորն են հասկանում անկախ ազգային, սեռական, տարիքային պատկանելությունից: «Երաժշտությունը հաղորդակցման հզոր միջոց է, որի օգնությամբ մարդիկ փոխանցում և կիսում են հույզեր, իմաստներ, մտադրություններ և զգացմունքներ, չնայած այն տարբեր լեզուներին, որոնցով իրենք խոսում են» /Mieil, 2015/: Լինելով մասնագիտությամբ բանասեր և երաժշտության մեծ սիրահար՝ այս առնչությամբ ինձ առավել հետաքրքրում է երաժշտության դերն ու ուժը ուսուցման մեջ. ինչպես այն կարող է ուսուցման գործընթացը դարձնել առավել հետաքրքիր և գրավիչ, իսկ նյութը՝ հեշտ հիշվող ու յուրացվող:

21-րդ դարում գլոբալացման, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում փոխվում են նաև դասավանդման մեթոդները, նյութի բովանդակությունը, ուսուցիչների և ուսանողների դերերն ու

որոշ գործառույթները: Բարձր տեխնոլոգիաներն ու համացանցը մեծ հնարավորություններից և առավելություններից բացի առաջացրել են նաև նոր մարտահրավերներ: Կրթության մեջ տեղեկատվության համատարած հասանելիության պայմաններում ավելի ու ավելի դժվար է դառնում աշակերտներին և ուսանողներին գրավելը, հետաքրքրելն ու մոտիվացնելը: Է՛լ ավելի մեծ կարևորություն են ձեռք բերում դասավանդողների և սովորողների գործնական հմտությունները, համակարգչից ու համացանցից գրագետ օգտվելու, ժամանակի ու նոր զարգացումների հետ համընթաց քայլելու կարողությունը: Եվ վերջապես, ինչ գիտելիքներ ու հմտություններ կարող են մատուցել ուսուցիչները, որոնք չես կարող ձեռք բերել ինքնուրույն համակարգչի և համացանցի միջոցով:

Ահա այս մարտահրավերներն են, որ թելադրում են կրթական նոր հրամայականներ: Հետազոտության ընթացքում որպես օրինակ են վերցրել ֆիննական կրթական համակարգի նորարարական մոտեցումը, այն է՝ մարդկային գործունեության տարբեր ոլորտների մասին գիտելիքների և հմտությունների դասավանդում առարկաների միավորման միջոցով: Ըստ Pearson հրատարակչական ընկերության անցկացրած համաշխարհային ամենամյա հետազոտության արդյունքների, Ֆինլանդիան իր կրթական համակարգի որակով հինգերորդ տեղում է զիջելով Հարավային Կորեային, Ճապոնիային, Միևգապուրին և Հոնկոնգին /www.edudemic.com/learning-curve-report-education/: Հարցումը հաշվի է առնում մի շարք գործոններ և հիմնականում հիմնվում է աշխարհի ամենազարգացած վաթսուհինգ երկրների տասնհինգամյա աշակերտներին տրված միջազգային ստանդարտացված թեստերի արդյունքների վրա: Ֆիննական մոդելը օրինակ է ծառայում շատ երկրների, այդ թվում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համար: Որո՞նք են դրա հաջողության բանալիները: Ֆիննական կրթական համակարգում մինչ ավագ դպրոցը չի կիրառվում թեստային համակարգ: Դասավանդումը ցածր դասարաններում իրականացվում է խաղերի միջոցով: Բոլոր դասերի միջև աշակերտներին հատկացվում է տասնհինգ րոպե ընդմիջում: Իսկ ուսուցիչներին, ովքեր բարձր որակավորում (պարտադիր առնվազն մագիստրոսական աստիճան) ունեցող մասնագետներ են, տրվում է լիակատար ազատություն իրենց համապատասխան առարկայի դասավանդման մեթոդների ընտրության մեջ: Ուսուցչի մասնագիտությունը մրցակցային է, հետևաբար ուսուցիչները բարձր են վարձատրվում և ըստ զեկույցի ավելի շատ են վաստակում, քան իրենց ամերիկյան և մյուս եվրոպական գործընկերները /www.csmonitor.com/World/Global-News/2015/: Չնայած արձանագրված հաջողություններին, ֆինները աշխատում են կրթության ոլորտի բարելավման ուղղությամբ և մշակում են նոր ծրագրեր: Այդ նորամուծություններից մեկն առավել հետաքրքրեց ինձ: Դա առարկաները միավորելու գաղափարն է, որը դեռ հետազոտման և մշակման փուլում է: Ֆինները այն անվանում են «երևույթների» կամ «իրավիճակների» դասավանդում: Օրինակ՝ աշակերտը մասնագիտական դասընթացներից կարող է ընտրել սրճարանում աշխատելը:

Նման իրավիճակում նա ստանձնում է մատուցողի կամ գանձապահի դեր և պետք է կիրառի մաթեմատիկայի, մայրենի և օտար լեզվի գիտելիքների տարրեր, օգտագործի իրական կյանքին մոտ շփման, համակարգչային, տարրական հաշվապահական հմտություններ: Երեխաները դեռ հիմնական դպրոցում սովորում են, թե ինչպես պետք է օգտվել բանկային քարտերից, բանկոմատից, ստեղծել ինտերնետային կայք, ձևավորել այն, առցանց գնումներ կատարել, պատվիրել ինքնաթիռի տոմս, հյուրանոցային համար: Նույն մոտեցումը մենք կիրառում ենք ուսանողների հետ, օրինակ՝ գործարար անգլերենի դասերի ժամանակ խնդրահարույց իրավիճակների (case studies) ուսումնասիրության, դերային քննարկումների և գանազան լուծումներ առաջարկելու միջոցով:

Առարկաների միավորումը դասավանդվող նյութի ընկալման դյուրացման նպատակով նոր չէ: Այն համարյա մեկ դարի պատմություն ունի, երբ ամերիկացի փիլիսոփա, ռեֆորմիստ Ջոն Դյուին առաջ քաշեց այն գաղափարը, որ դպրոցն ու դասավանդումը պետք է հնարավորինս արտացոլեն իրական կյանքը /www.csmonitor.com/: Ավելի ուշ «բաց դասերի» (open classroom) շարժումը ծագել է Մեծ Բրիտանիայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Շարժման հիմնադիրները դասավանդման ընթացքում կարևորում էին աշակերտների գործնական հմտությունները: Հիմնական նշանաբանն էր «սովորել կատարելով» (learning by doing): Նրանք գտնում էին, որ կրթության դասական մեթոդները խանգարում են երեխաների ստեղծարարությանը: Դասասենյակում ստեղծվում էին հատուկ պայմաններ, որտեղ անհատական կամ փոքր խմբերով, երեխաները առնչվում էին տարբեր առարկաների, իրերի, գրքերի հետ: Չկային խիստ ուսումնական ծրագրեր, ժամկետներ, դասասեղաններ: Մենյակները նման էին արվեստանոցների: Երեխաներից չէր պահանջվում պարտադիր նստել, նրանք ազատ տեղաշարժվում էին: Այդ ամենի հիմքում գործում էր հետևյալ սկզբունքը՝ երեխաները լավագույնս սովորում են, երբ հետաքրքրված են, ազատ են և հասկանում են ուսման մեջ իրենց գործողությունների նպատակն ու կարևորությունը /www.educationnext.org/the-openclassroom/: Նման մոտեցումները ունեցել են և՛ աջակիցներ, և՛ ընդդիմախոսներ, սակայն ինչպես տեսնում ենք, որոշ սկզբունքներ դեռ ոչ միայն արդիական են, այլ նաև փորձարկվում են որպես նորամուծություններ լավագույն կրթական համակարգերում:

Այժմ անդրադառնանք այն հարցին թե ինչու է անհրաժեշտ երբեմն համակցել երաժշտությունն ու օտար լեզուն, ինչ առավելություններ է ընձեռում երգն ու երաժշտությունը դասավանդման մեջ, ինչպես այն կարող է օգնել սովորել և հիշել նյութը հեշտությամբ ու հաճույքով: Անգլերեն լեզվի դասավանդման ընթացքում հաճախ են օգտագործվում երգեր: Թ.Մրֆին նշում է, որ երգերը օտար լեզվի դասավանդման ժամանակ կարող են մի քանի նպատակներ հետապնդել. 1) դրանք նպաստում են աշակերտների ունկնդրման հմտության զարգացմանը, ճիշտ առոգանությանը, հետևաբար բարելավում են նրանց բանավոր խոսքը, 2) կարող են օգտակար գործիք հանդիսանալ նոր

բառապաշարի, արտահայտությունների, քերականական կառույցների ձեռքբերման համար: Ըստ Թ. Մրֆիի, երբեմն ավելի հեշտ է օտար լեզվով երգել, քան խոսել: Այնուամենայնիվ, նա կարծում է, որ դասարանում երգերի օգտագործման մեծագույն առավելությունն այն է, որ դրանք զվարճալի են: Իսկ զվարճանքն ու հաճույքը, իրենց հերթին, սովորելու և գիտելիք ձեռքբերելու կարևորագույն նախապայմաններից են /Murphy, 1992/:

Գոյություն ունի մեծածավալ հետազոտություն նվիրված նաև երաժշտության բուժիչ ազդեցությանը: Նրանցից թերևս ամենաարժեքավորներից է 1806թ. Ս. Մեթյուսի և Պ. Վագների “On the Effects of Music in Curing and Palliating Diseases” գիրքը /Mathews, Wagner, 1806/: Նույն թեմային անդրադարձել են Բ. Քրոուն, Ռ. Դարնլի-Սմիթը, Փ. Քեմփբելը և բազմաթիվ այլ հեղինակներ: Վերը նշված հեղինակների ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում հոգեբանության և բժշկական գիտությունների լույսի ներքո:

Կատարված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս վստահաբար հայտարարել, որ երաժշտական թերապիան (music therapy) առողջապահական մասնագիտություն է երաժշտական թերապևտներով, ովքեր երաժշտության միջոցով վերականգնում են իրենց հիվանդների ֆիզիկական, մտավոր և հոգեկան առողջությունը: Երաժշտական թերապիայի հիմնական երեք մոտեցումները՝ Գերթրուդ Օրֆֆի, Նորդոֆ Ռոբինսի և Հելեն Բոնիի մեթոդներն են /www.wikipedia.org/Musictherapy/: Ապացուցված է, որ երաժշտությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ մարդու մտավոր, հոգեկան և ֆիզիկական առողջության վրա. այն բարելավում է իմունային համակարգը, վերացնում անհանգստությունն ու վախերը: Վերն ասվածից կարելի է եզրակացնել, որ երգն ու երաժշտությունը ներդաշնակություն են մտցնում մտքի, մարմնի և հոգու միջև:

Անհերքելի է նաև այն փաստը, որ դրական մթնոլորտը աշակերտների առաջադիմության գրավականներից մեկն է: Երաժշտությունը առաջացնում է որոշակի էմոցիոնալ ֆոն, դրական հույզեր և ոգևորություն, բարձրացնում է տրամադրությունը: Այս առնչությամբ նշենք «տրամադրության երաժշտություն» (mood music) երևույթը, որը վաղուց արդեն նորույթ չէ: Շատերն են առնչվել ձայնագրված երաժշտության հետ սրճարաններում, խանութներում, ատամնաբուժարաններում կամ մերսան սրահներում: Նման երաժշտության ոճը կախված է նպատակներից՝ հանգստացնել, լիցքաթափել կամ հակառակը՝ ոգևորել, աշխուժացնել, դրդել որոշակի գործողության: Ուսանողներից շատերը պնդում են, որ նրանք երաժշտություն են լսում դաս սովորելիս, քանի որ այն օգնում է նրանց հեշտ յուրացնել նյութը: Օտար լեզվով երգեր լսելը նույնպես նպաստում է լեզվի յուրացմանը: Իսկ ինչպե՞ս է կարելի ինտեգրել դասական երաժշտությունը ուսուցման գործընթացում: Ահա մի քանի օրինակներ.

Ուսանողները լսում են մի հատված Բեթհովենի N 5 սիմֆոնիայից և նկարագրում իրենց զգացողություններն ու հույզերը: Նրանք ծանոթանում են կոմպոզիտորի նկարի հետ, սովորում են ճիշտ արտասանել նրա անունը: Մինչ

ունկնդրելը կարելի է գրաստախտակին գրել մի շարք ածականներ, օր.՝ «bright, dark, gloomy, sunny, mournful, sad, happy, monotonous, lively, slow, fast, frightening, motivating, scary, windy, dangerous, threatening, misty...» և քննարկել, թե որոնք են բնորոշում տվյալ հատվածը, ի՞նչ մտավոր պատկերներ են ունկնդրողները ունենում այն լսելիս:

Այնուհետև ուսանողները ծանոթանում են կոմպոզիտորի հակիրճ կենսագրության հետ, պատասխանում են տեքստի վերջում տրված հարցերին: Կոմպոզիտորի կյանքի, երկրի, ապրած ժամանակաշրջանի մասին հանձնարարվում են տարբեր արտադասարանական անհատական կամ խմբային առաջադրանքներ, ռեֆերատներ: Ուսանողների ձեռք բերած գիտելիքները ստուգվում են խաչքառների և վիկտորինաների միջոցով: Դասի ընթացքում դիտվում են մուլտֆիլմերից հատվածներ, որտեղ հնչում են տվյալ կոմպոզիտորի մյուս ստեղծագործությունները:

Դասական երաժշտությունը հիանալի միջոց է զարգացնելու ստեղծագործական գրավոր հմտությունները: Ուսանողներին տրվում է պատմվածքի սկիզբը, օր.՝ “The carriage began to sway in the high winds and rain. With a violent crack of lightning, the horses cried out and the carriage was flung onto its side and slid down the muddy road. Charlie was thrown into the darkness and found himself in the branches of the giant oak tree that had just fallen...” և հանձնարարվում է երաժշտությունն ունկնդրելով՝ շարունակել պատմվածքը: Առաջադրանքը կարելի է կատարել անհատապես կամ խմբերով: Այնուհետև պատմվածքները ընթերցվում և քննարկվում են: Բացատրվում է թե ի՞նչպես է ստեղծագործության զարգացումը ազդել պատմվածքի սյուժեի զարգացման վրա:

Վերը բերված փաստարկներն ու օրինակները մեկ անգամ ևս ապացուցում են, որ թե՛ օտար լեզվի իմացությունը, և թե՛ երաժշտությունը, հատկապես վաղ հասակից դասականներին և նրանց ստեղծագործությունները ճանաչելը, մեծ դեր են խաղում անձի աշխարհայացքի, լայն մտահորիզոնի ձևավորման ու զարգացման գործում: Ինչպես ներկայացվեց հողվածում, երաժշտությունը կարող է ստեղծել լավ տրամադրություն, դարձնել ուսուցումը ավելի հաճելի: Հետևաբար, դասական երաժշտությունը, մեծ կոմպոզիտորների կենսագրությունն ու գործունեությունը անգլերեն լեզվի դասավանդման համար մեծ աղբյուր են հանդիսանում: Նման մոտեցումը կարող է դառնալ «լեզուն երաժշտության միջոցով և երաժշտությունը լեզվի միջոցով» երկկողմանի մի ռազմավարություն, որը կարող է ոչ միայն անգլերենի լեզվի գիտելիքներ տալ, այլև բազմակողմանիորեն կրթել ներառելով հարակից բնագավառների մշակույթի, պատմության, արվեստի, աշխարհագրության տարրեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Mathews S., Wagner P.K. On the effects of music in curing and palliating diseases. Philadelphia: University of Pennsylvania, 1806.

2. Miell D. Musical communication. Abstract // *Oxford Scholarship online*, March 2012.
3. Murphy T. Music & songs. Oxford: Oxford University Press, 1992.
4. Rosova V. The use of music in teaching English, diploma thesis. Brno, 2007.
5. Shen C. Using English songs: an enjoyable and effective approach to ELT // *English Language Teaching*, vol. 2, 2009, № 1.
6. Tse A., Malaysian teachers' perspective on using songs in English language teaching// *International Journal of Social Science and Humanity*, vol. 5, № 1, January, 2015.
7. <http://www.edudemic.com/learning-curve-report-education/html>
8. <http://www.csmonitor.com/World/Global-News/2015/html>
9. <http://www.csmonitor.com/html>
10. <http://www.educationnext.org/the-openclassroom/html>
11. <http://www.wikipedia.org/Musictherapy/html>

Л. БАРСЕГЯН – О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка. – Процесс обучения в глобальном информационном обществе требует более творческого подхода к преподаванию. Одним из наиболее эффективных способов воздействия на чувства и эмоции учащихся является музыка, которая широко применяется в области медицины, а также обучения и, в частности, в преподавании иностранного языка. В статье рассматривается важная роль музыки в создании позитивного эмоционального фона для восприятия и запоминания материала. Сочетая не только песни на иностранном языке, но и классическую музыку, можно проникнуть в глубины подсознания, мотивировать и приобщить к творчеству великих классиков, истории, страноведению, таким образом способствуя всестороннему развитию личности учащегося, стимулируя его образное мышление и формируя хороший вкус.

Ключевые слова: преподавание английского языка, песня, классическая музыка, движение открытых уроков, музыкальная терапия, музыка настроения

L. BARSEGHYAN – On Some Advantages of Integrating Music into Foreign Language Teaching. – The teaching process in the global information society requires a more creative approach to education. One of the most effective ways to influence the feelings and emotions of students is music, which is widely used in medicine, education, and in particular foreign language teaching. The paper is devoted to the important role and effectiveness of music in creating positive emotional background for easy perception and memorization of material. Combining not only foreign language songs, but also classical music, it is possible to penetrate into depths of subconsciousness, motivate and boost interest towards cultures of the great classical composers, history, regional studies, thus contributing to students' all-round development, stimulating creative thinking and forming good taste.

Key words: English language teaching, song, classical music, open classroom movement, music therapy, mood music

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/Лингвистика/Linguistics

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ս., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» ստեղծագործության շրջադասությունները (ինվերսիան) և դրանց հայերեն թարգմանության խնդիրը	3
ГАБРИЕЛЯН С., БАГУМЯН Л. Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема его перевода на армянский язык	
GABRIELYAN S., BAGUMYAN L. Stylistic inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the problem of its translation	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Համընդհանուր դարձվածային միավորների լեզվամշակութային, թարգմանական տարբերակները և դրանց հոգևոր իմաստները	11
ГРИГОРЯН А. Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения	
GRIGORYAN A. Linguocultural, translational options of universal phraseological units and their spiritual meanings	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ք., ԹՈՎԱՍՍՅԱՆ Լ. Համակարգչային եզրերի համարժեքների ստեղծումը և համակարգչային եզրաբանության զուգաձևությունների վերացման եղանակները հայերենում	18
ГРИГОРЯН К., ТОВМАСЯН Л. Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов	
GRIGORYAN Ch., TOVMASYAN L. The creation of computer terms in the Armenian language and means for eliminating term variations	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Տաբու բառերը որպես հուզաստեղծական բառերի առաջացման աղբյուր-դաշտ	30
ЕРЗИНКЯН Е., ГАЗАРЯН Л. Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов	
YERZINKYAN Y., GHAZARYAN L. Taboo words as a source domain for the development of intensifiers	
ԽԱՐԱԶՅԱՆ Հ. Սոցիալական գովազդը որպես հասարակական գիտակցության ձևավորման միջոց	36
ХАРАЗЯН Е. Социальная реклама как средство формирования социального сознания	
KHARAZYAN H. Public advertising as a means of developing social awareness	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ժամանակի նշույթավորումը տնտեսական իրադարձություններում	42
АРУТЮНЯН Л. Темпоральная маркированность экономических событий	
HARUTYUNYAN L. Temporal markers of economic events	
ՍԵԼԻԶ-ԱԴԱՄՅԱՆ Շ. Անգլերենում գայրույթ հույզի որոշ իմաստային յուրահատկությունների մասին	53
МЕЛИК-АДАМЯН Ш. О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке	

MELIK-ADAMYAN SH. Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Ս. Համատեքստը՝ որպես նույնարանական ասույթների ապա- կողմնորոնման միջոց	61
MECPOПЯH A. O контекстуальной обусловленности декодирования тавто- логических высказываний MESROPYAN A. Context as the key to the calculation of tautologies ՄՈՎՐՈՍՅԱՆ Տ. Ուղղաձիգ համատեքստը որպես լեզվարանական ուսում- նասիրության առարկա	74
МОВСИСЯН Т. Вертикальный контекст как объект лингвистического анализа MOVSISYAN T. Vertical context as a subject of linguistic study ԳԱԼՍՏՅԱՆ Ա. Когнитивные основы развития причинного значения в семантике первообразных предлогов	80
ԳԱԼՍՏՅԱՆ Հ. Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման ճանաչողական (կոգնիտիվ) նախադրյալները GALUSTYAN H. Cognitive aspects of developing causative meaning in simple prepositions ГЕВОРГЯН К. Человеческая телесность в современной лингвистике: соматизмы в языке и культуре	88
ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ. Մարդկային մարմինը ժամանակակից լեզվաբանության մեջ. սոմատիկ հասկացությունները լեզվում և մշակույթում GEVORGYAN K. Human body in modern linguistics: somatisms in language and culture СИМОНЯН А. Искренность в политической коммуникации через призму теории речевых актов	97
ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Անկեղծությունը քաղաքական խոսույթում SIMONYAN A. Sincerity and the speech acts used by the politicians	
ՄԵԹՈԴԻԿԱ/Методика/ Methodology	
НОВАКИМЯН L. TED Talks as a tool for enhancing listening comprehension ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. TED դասախոսությունները որպես լսել-ընկալելու հմտու- թյունները զարգացնելու միջոց ОВАКИМЯН Л. TED лекции как средство развития навыков аудирования TOVMASYAN N., GHAZARYAN R. A plan of a film-based lesson for EFL students of intermediate level	102
ԹՈՎԱՍՏՅԱՆ Ն., ԳԱԶԱՐՅԱՆ Ռ. Ֆիլմ-դասի ծրագիր անգլերենը որպես օտար լեզու դասընթացի համար ТОВМАСЯН Н., КАЗАРЯН Р. К вопросу об использовании кино- и видео- материалов при обучении английского как иностранного ԱՄԻՐՅԱՆ Ա. Ինտերակտիվ դասերի կազմակերպումը որպես մասնագիտա- կան նյութն օտար լեզվով առավել արդյունավետ յուրացնելու միջոց	119
АМИРЯН А. Организация интерактивных занятий как способ продуктивного усвоения профессионального материала AMIRYAN A. The organization of interactive lessons as a productive means of assimilation of the professional material	

ԱՐՄԵՆՅԱՆ Լ. Իսպաներեն դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային հայեցակերպը լեզվական բուհում	126
АРСЕНЯН Л. Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе	
ARSENYAN L. National-cultural aspect of learning Spanish phraseological units in a linguistic university	
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հ. Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում	136
БАГДАСАРЯН А. Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного	
BAGHDASARYAN H. The role of communicative method in teaching Spanish as a foreign language	
ԲԱՐՍԵԳՅԱՆ Լ. Օտար լեզվի դասավանդման մեջ երաժշտությունն ինտեգրելու որոշ առավելությունների մասին	144
БАРСЕГЯН Л. О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка	
BARSEGHYAN L. On some advantages of integrating music into foreign language teaching	
ՀԱՅԹՅԱՆ Լ. Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարությունների մասին.....	151
АЙТЯН Л. О стратегиях восприятия текста при чтении	
HAITYAN L. On reading comprehension strategies	
ՆԻԿՈԳՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում	158
НИКОГОСЯН Р., САРУХАНИЯН Б. Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка	
NIKOGHOSYAN H., SARUKHANYAN B. The role of cultural awareness in foreign language teaching	
ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Ուսանողակենտրոն ուսուցման կարևորությունն օտար լեզուն հատուկ նպատակների համար դասընթացում	165
ЧАЛАБЯН С., КАЗАРЯН Л. О важности лично-ориентированного обучения иностранному языку для специальных целей	
CHALABYAN S., GHAZARYAN L. The importance of learner-centered approach to teaching foreign languages for specific purposes	
БАГДАСАРЯН М., КОЧАРЯН С. К вопросу о преподавании иностранных языков в вузовской системе Армении	170
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Մ., ՔՈՉԱՐՅԱՆ Ս. Հայաստանի բուհական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ	
BAGHDASARYAN M., KOCHARYAN S. On the issue of teaching foreign languages in higher education establishments of Armenia	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/Литературоведение/ Literary Criticism

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը	178
АРАКЕЛЯН А. Структура «Дневников» Фр. Кафки	
ARAKELYAN A. The structure of Franz Kafka’s “Dairies”	
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Ամերիկյան «բիթնիկական շարժման» ազդեցությունը Չ. Բուկովսկու գեղարվեստական արձակի վրա	183
ХАЧАТУРЯН В. Формирование художественного мира Чарльза Буковского и американское «битническое движение»	
KNACHATURYAN V. Development of Charles Bukowski’s literary outlook and the American “beat movement”	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Դ.Հ. Լոուրենսի՝ «արյան գիտակցության» ըմբռնումը....	189
ОГАННЕСЯН В. Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса	
HOVHANNISYAN V. D.H. Lawrence’s perception on “blood-consciousness”	
ՍԱԿԱՐՅԱՆ Ա. Կառլո Գոլդոնի և Հակոբ Պարոնյան («Երկու տիրոջ ծառան») նույնանուն պիեսների համեմատական վերլուծություն).....	196
МАКАРЯН А. Карло Гольдони и Акоп Паронян (составительный анализ одноименных пьес под названием «Слуга двух господ»)	
MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the namesake plays “The Servant of Two Masters”)	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ր. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի	209
ПЕТРОСЯН Р. Принципы и особенности построения философского романа по Мигелю де Унамуну	
PETROSYAN R. The principles and features of the construction of philosophical novel according to Miguel de Unamuno	
Տեղեկություններ հեղինակների մասին	217
Сведения об авторах	
Information on the contributors	